

2457): Այս ժողովին վերաբերութեամբ շինուած քարէ յիշատակարանի մասին տեսնել գիրքիս մէջ (Առաքել վրդ. Շոնօրեցի անունը, էջ 27):

Փիլիպպոս կթղ. Ս. էջմիածնի տաճարին մէջ ալ նորոգութիւններ կատարած է, մասնաւորապէս սրբատաշ քարերով կը նորոգէ Ս. Հռիփսիմէի տաճարը ըստ հետեւեալ արձանագրութեան. «Ի թուին ՌՃԹ (=1653) Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս Հայոց վերստին նորոգեցի զեկեղեցիս սրբոց կուսանացն Հռիփսիմեայ և Գայիանեայ»: (Հ. Հայրենեաց, 1892, էջ 30):

Փիլիպպոս ՋՈՒՂԱՅԵՑԻ.— Որդի Ասուածատոյ, 1769ին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Նալեան Յակոբ պարք.ի Քարոզի Կիւրակից ձեռագիրը, Գերմանիկցի կիրակոս վրդ.ի համար (ՄՁ. Թ. 90):

Փիլիպպոս ՊԵ.— (1542 — 1562), 1547ին Փիլիպպոս պատրիարքի օրով ահաւոր երկրաշարժ մը կը պատահի և մեծ վնասներ կը պատճառէ, մանաւանդ Գալիլիոյ կողմերը, կը փլչի Ս. Յակոբի սեղանատունը, զոր նոյն տարին կը նորոգէ Փիլիպպոս պարքը. ատոր հիմնարկութիւնը կատարուած էր 1391ին Գրեկոս պարք. Եգիպտացիին օրով. ըստ այն հրովարտակներուն որ կը պահուին Ս. Աթոռի զիւանական թղթոց մէջ (Սաւաղան. էջ 655):

Օ

ՕՇԻՆ ԽԱՆՈՒԹՊԱՆ.— ՄՁ. Թ. 1973 ձեռագիր Աւեստանը կը նուիրէ Գողգոթայի եկեղեցիին, ինչպէս կը հասկցուի անոր յիշատակարանէն որ է հետեւեալը. «Ես Աւշին խանութպանս, որ գնեցի սուրբ Աւետարանս ի յարգար ընչից սբ. տեղացն Գողգոթայի ինձ ի յիշատակութիւն. ու իմ ննջեցելոցն և իմ քուրն Սպիլին. ու գեաբոյս օրդոյն Գրիգորին, ու իմ կողակցին Շուշանբագին. և իր ննջեցելոցն, ամէն. գրեցաւ յիշատակարանս ի մեծ թվն. ՊԽԵ (=1396) (Խապ. Յոց. տետր. Բ.):

